ՀԱՅ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԳԵՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ս. Գ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Անցյալ դարի 50—60-ական թվականներին հայ գրական և հասարակական կյանքում կատարվող տեղաշարժերի, ինչպես նաև մտավոր և կուլտուրական նվաճումների պատմական իմաստավորման անհրաժեշտությունը գեղագիտական միտքն ուղղում է գրականության շատ հարցեր գաղափարական նոր դիրքերից գնահատելու և արժեքավորելու խնդրին։

Հասարակական կյանքում գրականության և գեղարվեստի ունեցած դերի լուրահատուկ ըմբռնումը, լուսավորական գաղափարների և գործնական ծրագրերի տեսանկյունից կյանքի ճշմարտացի պատկերման պահանջը համազգային առաջընթացին ծառայեցնելու միտումը գրաքննադատական մտքին նոր և ուրույն դիմագիծ են հաղորդում։

Նշված տասնամյակների հայ քննադատական մտքի ձևավորումը բխում է մտավոր շարժման ընդհանուր նպատակներից։ Եվ պատահական չէ, որ գեղարվեստի շատ հարցադրումներ ծնվում են հրապարակախոսական հոդվածներում, գրական շատ չափանիշներ ստեղծվում են ոչ թե գրականության ընթացքի տեսական ընդհանրացումներում, այլ իրականության բարեշրջման լուսավորական գործնական նպատակների թելադրանքով։ Այս երևույթը գրաքննադատական մտքին հաղորդում էր ավելի ծրագրային, քան կոնկրետ վերլուծական բնույթ։ Այդ տեսակետից գրաքննադատության ձևավորմանը նպաստող գործոններն ավելի խորն են։ Դա ենթադրում է կապերի ավելի բարդ համակարգ, որը կպարզաբանվի լուսավորիչների պատմափիլիսոփայական պատկերացումների և լուսավորական գաղափարաբանության որակական տարբեր դրսևորումների հետազոտությամբ։

Երևույթի գաղափարական արմատների ճիշտ ըմբռնման տեսանկյունից առավել անհրաժեշտ է գրաքննադատության նման կարգի ուսումնասիրությունը, հատկապես այն դեպքում, երբ 50—60-ական թվականների լուսավորական գրականության հետազոտության ընթացքը բնորոշվում էր ավելի գաղափարաբանության մտավոր պարտադրումներով, քան հայ հասարակական կյանքի զարգացման կոնկրետ պահանջների և խնդիրների գեղարվեստական արտահայտության վերլուծական բացահայտումով։

Ինչո՞վ բացատրել այս իրողությունը։ Հասարակական արմատական վերափոխումների ժամանակ գրականությունը դիտվում է որպես գաղափարական պայքարի միջոց և բովանդակում է պատմական շարժման գաղափարայնության համակողմանիությունը։ Երկրորդ պատճառը՝ գրականության և կյանքի փոխհարաբերության լուսավորական ըմբռնումն է, ըստ որի ազգային կյանքի զարգացման միտումները և առաջադիմելու մղումները ածանցվում են մտքերի և բարքերի բարեշրջությանը։ Լուսավորական գեղագիտության իմացաբանական ելակետն այսպիսին է. կարծիքներն են ստեղծում կեցություն, գաղափարներն են կառավարում աշխարհը։ «...աշխարհս անդառնալի կերպով

միտքին վեհապետական իշխանության կը վերաբերի...»[1], ասված է «Ծաղիկ» հանդեսում։ «...գաղափարք կը կառավարեն աշխարհքը»[2],— նկատում է լուսավորիչ Ն. Զորայանը։

Արվեստի և կյանքի հարաբերությունը, մի այլ ժամանակակցի կարծիքով՝ այսպիսին է. «...ուստի, լեզու և գրություն ազգաց հետ քայլելով և հետևելով անոնց բաղդին պայծառության կամ խավարմանը, կը փայլին անոնց հետ և կ՝իյնան անոնց հետ։ Պատմությանց իմաստասիրությունը աս սերտ հարաբերութենես խիստ օգտակար հետևություն մը կրնա քաղել՝ բանականության ընթացքը ժողովրդոց վիճակներուն հետ համեմատելով։ Կը տեսնե որ ուր առաջինն է ծաղկյալ և հառաջադեմ, հոն մարդիք ալ փառաց և պայծառության մէջ հսկայաքայլ կը հառաջեն, և ուր լեզուն և գրությունը, այսինքն բանականությունն և դպրությունք, չեն մշակված կամ հետադարձ կը քալեն. մարդկությունն ալ վայրենության և կամ անկման վիճակին մեջն է»[3]։ Այլ առիթով Ա. Հայկունին դրել է. «Ազգ մը չիկա աշխարհիս վրա որ իր ամեն կողմանե բրած հառաջադիմությունները և բարեկարգությունները գրիչին չի պարտավորի...»[4]։

Կարելի է բազմաթիվ մեջբերումներ անել նաև հայ մյուս լուսավորիչներից։ Նման գաղափարական ելակետ ունեցող գրականության մեջ, բնականաբար, առաջին պլան է մղվում սուբյեկտի (հեղինակի) դատավճիռը իր գաղափարների տեսանկյունից՝ ուղղված երևույթների օբյեկտիվ զարգացման ընթացքին, իսկ գեղագիտական միտքը միտում է բացահայտելու թե դաստիարակչական և դիդակտիկ նպատակադրումներով ստեղծված գեղարվեստականացող գաղափարների որոշակի համակարգը մարդկային մտածողությանը և հետևապես սոցիալական ու ազգային առաջընթացին, բարեշրջությանը ի՞նչ չափով և ի՞նչ սահմաններում է նպաստում։

Պարզ է թե այս դեպքում գրականությունն ինչ դեր ունի, երբ խոսքն ուղղված է ազգային կյանքի եվրոպականացմանը և հասարակական կյանքի գործնական վերաշինությանը։ Վերոհիշյալ օրինաչափությունը ավելի հստակ պատկերացնելու համար պետք է հաշվի առնել նաև հայ գաղափարաբանության և օտարամուտ ազդեցությունների փոխհարաբերության յուրահատկությունը։

Յուրաքանչյուր ազգի գրականություն կամ ազգային գրականություն որոշարկվում է տվյալ ազգի հասարակական կառուցվածքի ներքին խնդիրներով և պահանջներով։ Այն յուրացնում է գաղափարներ և գրական ձևեր, որոնք ընդունելի և գործուն նշանակություն ունեն գաղափարական և պատմական շարժման պահանջների տեսակետից։ Այստեղ էլ հենց ի հայտ է գալիս հայկական կյանքի և լուսավորական շարժման փոխպայմանավորվածությունը, որի դիալեկտիկան ավելի հստակ պատկերացնելու համար բերենք գերմանական լուսավորիչներին բնութագրող Գ. Վ. Պլեխանովի մի դիտողությունը. «Նրանց թվում էր թե մտածողությունը ի վիճակի է փոխել կեցության բնա-

---

1 «Ծաղիկ», 1861, № 18, էջ 140։

2 Ն. Մ. Զորայան, Ընթերցասիրություն կամ գիրք կարդալու միջոցով մտավորական մշակության հասնելու օգտակար խրատներ (այսուհետ՝ «Ընթերցասիրություն...»), Կ. Պոլիս, 1852, էջ ժգ։

3 «Բանասեր», 1851, № 10, էջ 446։

4 «Ծաղիկ», 1861, № 13, էջ 101։

կանոն ընթացքը։ Նրանց պատկերացումն այն մասին, թե ինչ պետք է լինի, կազմվում էր ոչ թե իրենց շրջապատող իրականությունն ուսումնասիրելու վրա, այլ արդարացի և նորմալ հասարակական կարգի մասին այն դատողությունների հիման վրա, որ նրանց մոտ եղել են տվյալ ժամանակ։ Բայց այդ դատողություններր նրանց հուշում է ոչ այլ ինչ, քան նույն շրջապատող իրականությունը (գերազանցապես նրա բացասական կողմը)»[5]։

Այս կետում է, որ օտարամուտ մտածողությունը հարաբերվելով գրական պրոցեսի պատմական տեղաշարժերին և սնելով այն, ստանում է տեղական կոնկրետ դրսևորում, իսկ գրական քննադատության մեջ՝ երևույթի տեսական իմաստավորման ելակետ։

Նշենք մի կարևոր հանգամանք, որ հատուկ է 50—60-ական թվականների մտածողությանը. ամեն մի հասարակական երևույթ գնահատվում է լուսավորությանը և համազգային առաջընթացին նպաստող իր գործնական հատկանիշների տեսանկյունից։ Դժվար չէ նկատել, որ այդ շրջանի գրաքննադատության շատ չափանիշներ ձևավորվում են ելնելով հենց այդ պահանջից։ Հայ լուսավորական մտավոր շարժման գործնական հեռանկարներն ուղղված էին ազգային կյանքի վերանորոգության խնդիրներին։ Կյանքի վերափոխման հիմնական միջոցը և ուղին համարվում էր ժողովրդական լայն խավերի լուսավորությունը. «Բայց ազգային հարազատ լուսավորություն՝ առանց բուն ազգային մատենագրության՝ սուտ բան է, անարմատ ծառ է»[6]։ Գրականության պատմահասարակական դերի այս կարգի գերագնահատումը, որը հատուկ է բոլոր լուսավորիչներին, ելնում է նրանց փիլիսոփայությունից։

Քննադատական հայացքների անմիջական կապը ազգային և հասարակական ծրագրերի հետ ակնառու է դարձնում հասարակական մտքի, հայ գաղափարաբանության առանձին կողմերի ոչ ամբողջական տարանջատվածությունը։

Հայ մտավոր շարժման առաջամարտիկներ Ստ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Մ. Մամուրյանը, Գ. Չիլինկիրյանը, Ն. Զորայանը, Ա. Հայկունին և ուրիշներ հաճախակի են անդրադարձել գրականությանն ու արվեստին, արծարծելով, երբեմն էլ մշակելով գրականության հասարակական նշանակության ու դերի, նրա արտահայտած բովանդակության, ժողովրդայնության, կյանքի ճշմարտացի պատկերման, երևույթների տիպականացման, ընդհանուրի և մասնավորի փոխհարաբերության (գեղարվեստական արտացոլման սահմաններում) մի շարք ըմբռնումներ. «Կատակերգության նպատակն է ընկերային ամեն տեսակ խայտառակությունները և մոլությունները նկարագրել այնպիսի ձևով և կերպով, որ հանդիսականը խնդալու ստիպված ժամանակ նաև բարոյական դաս մ՚ալ տա անոր»[7]։ Մի այլ ժամանակակից հարցը դնում է այսպես... «Թե ի՞նչ է թատրոնը, և ի՞նչ է թատրերգությունք, որ աստիճան կրթիչ և հրահանգիչ են մարդկության, և ի՞նչ կարևորություն ունին վերաբերությամբ առ մեր Ազգն»[8]։

---

5 Գ. Վ. Պլեխանով, Փիլիսոփայական ընտիր երկեր, հ. I, Երևան, 1960, էջ 469—470։

6 Ստ. Նազարյան, Վարդապետարան կրոնի հասարակաց հայախոսությամբ, Մոսկվա, 1853, էջ 6։

7 «Ծաղիկ», 1862, № 23, էջ 179։

8 «Ժամանակ», 1863, № 3, էջ 19։

Գրականությունը հասարակական կյանքին ծառայեցնելու նման գործնական միտվածությունը լուսավորական բնույթ էր տալիս 50—60-ական թվականների հայ քննադատական մտքին։

Հայ լուսավորիչների գեղագիտությունը չի շրջանցում լուսավորական գաղափարաբանությունը, այլ ձևվում է այդ հիմքի վրա, ստանալով ավելի հրապարակախոսական, լուսավորական և դիդակտիկ բնույթ, քան՝ վերլուծական։ Ընդ որում՝ այն ավելի շատ հակված է արվեստին առաջադրելու գործնական նպատակներ, լուսավորական գաղափարներ տարածելու խնդիրներ՝ ելնելով գեղարվեստական խոսքի գերագնահատման լուսավորական պատկերացումներից, քան բացատրելու արվեստի փիլիսոփայությունը։

Ըստ լուսավորական գեղագիտության, արվեստի ներքին նպատակասլացությունը պետք է կազմեն ժամանակի առաջադրած պահանջները։ Հետևաբար, կյանքի ճշմարտացի պատկերման պահանջը լուսավորիչների մոտ և՛ գեղագիտական ենթիմաստ ունի, և՛ ծրագրային, հրապարակախոսական. «Հետևողական լուսավորչի համար իրականության արտացոլման ճշմարտացիությունը ունի նպատակային նշանակություն, ինչպես պրակտիկ բժշկի համար՝ ախտորոշման ճշտությունը։ Ճիշտ ախտորոշումը բժշկին անհրաժեշտ է նրա համար, որ իմանա թե հիվանդին ինչպես պետք է բուժել, լուսավորչի համար իրականության ճշմարտացի պատկերումը կարևոր է այնքանով, որ այն ցույց է տալիս նրան, թե ինչումն է կայանում նրա թերությունը՝ ենթակա վերացման բանականության անունից»[9]։

Լուսավորական պատկերացման սահմաններում արվեստի դերը գիտությունից պակաս չէ հասարակական գիտակցությունը բարձրացնելու գործում, որը հասարակարգի բարեկարգման միակ ուղին է։ Ի դեպ, նման տեսակետներ կան Մ. Նալբանդյանի հոդվածներում. «...բայց ամենայն բանիմաց և ճշմարտասեր հայի վերա պարտականություն կա պատժել և պատուհասել բերանով և գրչով ազգի պակասությունքը, հրապարակել նորանց այնքան, մինչև որ ազգը տեսանելով յուր վերայի կեղտը, զզվի, գարշի և խնամ տանե լվանալու և մաքրելու յուր անձը...»[10]։

Առհասարակ անժխտելի է արվեստի դաստիարակիչ դերը և հասարակական գիտակցության վրա նրա ունեցած ներգործության ուժը, սակայն այլ է արվեստի մասին լուսավորական ըմբռնումը. այն հեռանկարների և ակնկալիքների ավելի լայն շառավիղներ է գծում։ Արվեստը գնահատվում է կյանքի վերակառուցմանը օժանդակող իր հատկանիշներով. «Ինչպես որ ամեն կրթյալ ազգերէ վկայված է, ժողովրդական մը բարոյականը շտկելու մեծապես կօգնեն կատակերգությունները վասն զի մարդուս պակասությունները կատարելապես իրենց ամեն հանգամանքներովը դուրս կը ցատկեցնեն, ծաղրելի կընեն և զվարճություն տալով միանգամայն՝ կը խրատեն ունկնդիրները»[11]։

Նալբանդյանը ևս այն կարծիքին է, որ իր քարոզած ճշմարտությունը գուցե կտրում է ազգի սիրտը, բայց այդ սուրը փտած և ճարակած խոցը առողջ մասերից բաժանելու և հեռացնելու միակ միջոցն է[12]։

---

9 Г. В. Плеханов, Сочинения, т. XXIII, Л., 1926, стр. 218.

10 Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, Երևան, 1953, էջ 149։

11 «Բազմավէպ», 1856, № 2, էջ 17։

12 Մ. Նալբանդյան, նշվ. աշխ., էջ 141։

Իրականության բարեշրջման նույն տեսական-փիլիսոփայական մղումներով է ստեղծվում գեղարվեստական պատկերի ճշմարտացիության գեղագիտական պահանջը։ Մի այլ առիթով Նալբանդյանը գրում է. «Լուսավորության, դպրության բանաստեղծի և հեղինակի պարտականությունն է ժողովրդի հասկացողությունը մաքրել, նախապաշարմանց և նանրահավատության մառախուղները ցրվել»[13]։ Դժվար չէ նկատել, որ ռուս լուսավորիչների նման Նալբանդյանը ևս գրականությունը դիտում է որպես լուսավորական գաղափարների տարածման կարևորագույն միջոց։

Նույն կարծիքին է և Ստ. Նազարյանը. նա գտնում է, որ մատենագրությունը նպատակ ունի «...տարածելու ազգի մեջ առողջ դատողությունք և խելացի լուսավոր հայացք...»[14]։ Իսկ «Մեղու Հայաստանին» գրում է. «...հարձակվելով հասարակությանը մեջ գտնված վատ սովորությանց վերա և ջատագովելով լավ հատկությունքը, կարող են հասնել իրանց նպատակին, որ է կրթել ժողովուրդը»[15]։

Լուսավորությամբ հասարակական կարգերը վերափոխելու ձգտող մտավոր շարժման ներկայացուցիչները միայն իդեալիստական փիլիսոփայության՝ «իրերի ընթացքը որոշվում է գաղափարների ընթացքով» պատկերացման սահմաններում կարող էին տեսական արդարացում տալ իրենց գործնական ծրագրերին։ Հասարակական այս կամ այն հարաբերության փոփոխությունը դառնում է գաղափարների և կարծիքների փոփոխության հետևանք։ Պատկերացումների այդ լույսի տակ ստվերվում է այնպիսի մատենագրություն, որը չի ներկայացնում կյանքը՝ իր շարժման իդեալի հեռանկարով, փոփոխման հակասություններով և առկայի ու իրականի սկեպտիկ ընկալումով։

Լուսավորական փիլիսոփայական միտքը պատմության ընթացքը ընկալում է մտքերի բախման և հարափոխության շղթայի տեսքով։ Կյանքի բնապատմական զարգացման շղթայում բանականությունը առաջադրում է որոշակի տեսական և գործնական խնդիրներ, որոնք կարող են իրականության նոր որակի ելակետ և պատճառ դառնալ։

Մ. Նալբանդյանը գտնում է, որ նախախնամության թաքնված շնորհները հայտնագործվում են այս կամ այն անհատի մեջ. «մտքերի անխափան փոխադարձից» հայտնագործված ճշմարտությունը դառնում է հանրության սեփականություն, ոչնչացնելով «բնական անհարթությունը» անհատների մեջ և բարձրացնում է ազգի ընդհանուր «բարոյական զորությունը»[16]։ Մարդկային մտածողությունը առաջընթաց ներկայացնող այդ տեսական հեռանկարները ընկալում է գաղափարական տարբեր դրսևորումների ձևով։

Ազգի գոյությունը դառնում է անիմաստ և «անխորհուրդ», երբ այն իր մեջ չի ունենում զարգացման ներքին պոտենցիալ։ Ազգի բնական առաջընթացի պատկերացման ոլորտներում ծնվում է զարգացող, փոփոխվող կյանքը պատկերելու գեղագիտական պահանջը, որը գրականությանը ուղենշում է ներկայացնելու ոչ թե կյանքի այս կամ այն կողմի մեռած պատկերը, այլ հին և նոր գաղափարների պայքարի գեղարվեստական վերարտադրումը։ Կյանքը պետք է ներկայացնել մտածողության առաջընթացի տեսանկյունից, զարգաց-

13 Նույն տեղում, էջ 493։

14 Ստ. Նազարյան, Երկեր, Թիֆլիս, 1913, էջ 84։

15 «Մեղու Հայաստանի», 1866, № 13, էջ 99։

16 Մ. Նալբանդյան, նշվ. աշխ., էջ 348։

ման հեռանկարով։ Ամեն ինչ պետք է ծառայի կյանքի գործնական նպատակներին և պահանջներին, այլապես այն դառնում է ավելորդ և անիմաստ։ Գրական երևույթը արժեքավորվում է լուսավորականության գործնական նպատակների հետ ունեցած օգտակար կապի սահմաններում։ Այսպիսի հասարակական նշանակությամբ են ընկալվում արվեստն ու գրականությունը։ Գործնական նպատակներին ծառայելու գրականության այդչափ ընդգծված միտումը՝ չէր կարող ընդգծված տենդենցիոզություն չառաջացնել այն դեպքում, երբ լուսավորիչների իդեալը իրականացման քիչ նախադրյալներ էր վերցնում կյանքից։

Երևույթը գեղագիտական բովանդակություն է ստանում, եթե հասարակական պետքերի անհրաժեշտ «ընդունակություն և ձգականություն» ունի։ Գեղարվեստական գործի գնահատության չափանիշի նախադրյալ է դառնում երևույթի հասարակական ֆունկցիան։ Փիլիսոփայական և հասարակագիտական մտածողության այս ոլորտներում պետք է հայտնաբերել լուսավորական գեղագիտության որոշ առանձնահատկությունները և գրականությանն ու գեղարվեստին առաջադրած նրա պահանջների յուրահատկությունը։

Ըստ լուսավորական գեղագիտության, առաջնայինը երկի գաղափարն է, իսկ երկի արժեքը չափվում է գեղարվեստական համապատասխան ձևերի օգտագործմամբ և ընտրությամբ, որոնք ավելի ցայտուն են դարձնում երկի գաղափարը և իրագործում ստեղծագործության գաղափարական-գեղարվեստական, ինչպես նաև դաստիարակչական ֆունկցիան։ Ամեն մի նյութ կարելի է ներկայացնել զանազան ձևով. «բայց ամեն տեսակի նպատակը պետք է լինի բարոյական խրատ և ուսումն»[17]։

Ժամանակների մեծ մասի համար արվեստի առաջնահերթ խնդիրներից մեկը եղել է հանդիսատեսի կամ ընթերցողի վրա առավել ուժեղ տպավորություն թողնելը։ Սակայն լուսավորական գրականության և գեղագիտության համար այն ավելի ընդգծված և շեշտված է դառնում, երբ հասարակական վերաշինության իդեալները և մարդու էության բարոյականացման տեսակետները անմիջականորեն, ուղիղ գծով կապվում են այդ տպավորության հետ։ Լուսավորական գեղագիտության մեջ ձևն անգամ ընկալվում է որպես դաստիարակող արժեք. «Թեատրոնական բանախոսության լեզուն չէր այնքան ազնիվ և մշակված, ինչպես պիտո է և արժան է լիներ, որ ունենար դաստիարակիչ ազդեցություն ժողովրդի վերա[18],—գրում է Մ. Նալբանդյանը Մոսկվայում բեմադրված «Արիստակես» պատմական ողբերգության առիթով։

Մեկ այլ տեղ Նալբանդյանը գրում է. «Այն հեղինակը, որ ոչ ամեն բան ցույց է տալիս ներգործողների ձեռքով, այլ երբեմն իր բերնից է պատմում նոցա մասին, նա լսեցնում է, որի տպավորությունն ավելի թույլ է, քան տեսնելու և շոշափելու տպավորությունը»[19]։

Երևույթը կյանքի պատկերների հյուսվածքում տեսանելի դարձնելը ավելի տպավորիչ է և ընկալման առումով՝ ավելի ներգործուն, քան հեղինակային դատողությունները՝ մի գեղագիտական պահանջ, որ հեղինակային սուբյեկտիվությունից և տենդենցի կոնկրետ, մերկապարանոց ցուցադրումից զերծ

---

17 «Մեղու Հայաստանի», 1860, № 44, էջ 351։

18 Մ. Նալբանդյան, Երկ, հ. 1, Երևան, 1945, էջ 391։

19 Մ. Նալբանդյան, Ընտիր երկեր, էջ 483։

մնալու պարտադրում է։ Ռեալիզմի հետագա շրջանի գրաքննադատության մեջ նման պահանջը ավելի շատ այլ գեղագիտական հիմքեր ունի, քան արվեստի դաստիարակչական դերի օգտագործման պարտադրանք լինելը։

Այսպիսով, գեղարվեստական գործի կառուցվածքայնության շատ սկզբունքներ թելադրվում են վերջինիս վերափոխող և դաստիարակիչ դերի գերադնահատված համոզմունքներից։

Ժամանակաշրջանի գրականությունը դիդակտիկ բնույթ է ստանում նաև մի այլ ըմբռնողության թելադրանքով. լուսավորական պատմահայեցողության սահմաններում բարոյականության ըմբռնումները բխում են բանականությունից։ Ընդ որում՝ հասարակական հարաբերություններն ավելի կատարյալ և բանական տեսք կստանան, եթե անհատը կատարելապես գիտակցի իր բարոյական պարտականությունները։ Մարդը «որչափ որ առանց բարոյական սկզբանց հմտանալու՝ բարոյապես ապրելն ալ անհնար է»[20]։ Նույն կարծիքին է Գ. Չիլինկիրյանը. «Մտային լուսով միայն մարդս կրնա սանձահարել ինքը զինքը, անով միայն կրնա ճանչնալ և կատարել իր պարտավորությունը, որմէ դուրս բարոյական չկա...»[21]։ Մի այլ առիթով ասված է. «Մարդուս բնավորության և բարուց եղծանելուն բուն պատճառը տգիտությունն է»[22]։

Նման դեպքերում, բնականաբար, արվեստի առաջ պետք է դրվեն լուսավորական գաղափարներ, բարոյական ըմբռնումներ տարածելու և պրոպագանդելու պահանջ, որը իր հերթին պայմանավորում էր լուսավորական երկի տիպաբանությունը։ Եվ, իրոք, լուսավորական գեղարվեստական երկի տիպաբանությունը իր վրա միշտ կրում է սյուժետային կառույցի, կոնֆլիկտի ստեղծման ու լուծման դաստիարակչական արժեքի ըմբռնումը։ Իսկ գեղագիտական միտքը գործի արժանիքը հայտնաբերում է նրա համազգային առաջընթացին նպաստող ներքին իմաստի և նպատակի մեջ։ «Ընտիր թատրերգությունները գործնական կերպով ներկայացված դասեր են...»[23]։

Նույն ձևով և իրականության ճշմարտացի պատկերման պահանջը լուսավորական գեղագիտության մեջ բեկվում է գրականության բարոյա-կրթական արժեքի և դերի ըմբռնմանը. մի չափանիշ, որ այս կամ այն կերպ կապվում է մտավոր շարժման տարբեր հոսանքների պատկերացումներին։ Ժամանակաշրջանի փիլիսոփայական մտքի տարբեր աշխարհըմբռնումներ ինչ-ինչ սկզբունքային ընդհանրություններ և միանման եզրեր էին հայտնաբերում այդ հիմքի վրա։ Վերակառուցումների կրքոտ և տենդոտ որոնումներին երբ զուգադրվում է գեղարվեստական խոսքի կրթող և դաստիարակող արժեքը, գրաքննադատությունը արվեստի առաջ դնում է լուսավորական նպատակներ և որոշակի խնդիրներ։ Գրականության լուսավորական և բարոյակրթական կողմը ավելի էր ընդգծում այն պահանջը, թե հեղինակը պետք է ունենա գիտելիքների մեծ պաշար, դառնա ժամանակի գաղափարական առաջընթացի կրող և բարձր կանգնած լինի ժողովրդական մասսաների մտածողական մակարդակից։ Լուսավորական գեղագիտությունը հեղինակին նույնացնում է ուսուցիչ հասկացությանը, մի տեսակետ, որ կծնվեր միայն լուսավորական գեղա-

20 «Ընթերցասիրություն...», էջ 311—312։
21 «Մաղիկ», 1861, № 15, էջ 113։
22 Նույն տեղում, էջ 21։
23 «Ժամանակ», 1863, № 3, էջ 245։

գիտության մեջ, ուր արվեստի արտացոլած բովանդակությունը նույնացվում է հասարակության բանական (գիտական և մտածական) առաջընթացի համընդհանուր բովանդակությանը։ Նշանակում է ազգի բանականությունը գիտելիքներից և մտածական համապատասխան մակարդակից զուրկ է, որի բարձրակետից պետք է ներկայացվի շարժուն կյանքը կամ կյանքի շարժումը։ Ուրեմն անհրաժեշտ է իմացական զարգացման ցածր աստիճան ներկայացնող ժողովրդի հասկացությանն ու նախապաշարումներին հակոտնյա մտածողական որոշակի մակարդակ. «Ամբոխի տգիտության ուսերի վերա մատենագիր լինել շատ հեշտ բան է... մատենագրությունը ամենայն ազգի մեջ պարտ է լինել հասարակության մտածող և բանագետ մարդերի կարծիքի և հայացքի հայտարար, բայց ոչ մի անկիրթ բազմության խակ ու թյուր կարծիքի և հայացքի»[24]։ Վերջին դեպքում գրականությունը իսպառ զրկվում է իր էական հասարակական նպատակադրումից և կորցնում է «ամենայն դաստիարակող ազդեցություն, մատենագրի կողմից հասարակության վերա...»[25]։

Դիդակտիզմը, արվեստի էական հատկանիշ դիտող գեղագիտական դրույթները անհրաժեշտաբար կծնվեին միայն մտածողական և փիլիսոփայական պատկերացումների այն համակարգում, ուր կյանքի շարժումը դիտվում է որպես բանականության զարգացում։ Եթե ժամանակի բարեշրջումը հասկացությունների զարգացման ընթացք է, իսկ վերջինիս կրողը՝ ժողովուրդը, ապա գրականությունը գործ ունի «ազգային ոգու և պետքերի» կամ որ նույնն է՝ տվյալ հասարակության ըմբռնումների, պատկերացումների և գաղափարների հետ։ Ստացվում է այնպես, որ ժամանակաշրջանի հայ գրականությունը կյանքի հետ կապվում և այն արտացոլում է լուսավորական ծրագրերի թելադրանքով։ Ընդ որում՝ ժողովրդայնության գաղափարը ձևավորվում է ժողովրդական ոգու, գիտակցության և բանականության համազգային առաջընթացի լուսավորական ըմբռնումից։

Լուսավորիչների մոտ «բանականությունը» ստանում է որոշակի պատմական լիցք և բովանդակություն։ Վերջինիս հեղաշրջումը, որից ելնում է պատմության զարգացումը, հայտնաբերում է սոցիալական որոշ ուժեր, որոնք ի վիճակի են իրականացնել լուսավորության պատմականորեն մեծիմաստ գործը։ «Ինտելիգենցիան դիտել որպես հասարակական զարգացման գլխավոր շարժիչ ուժ, զուտ լուսավորական մտահայեցություն է, հենված պատմական իդեալիզմի հիմքին»[26]։ «...Մեր խղճալի ազգը... իր ներկա լուսավորությունը և քիչ կամ շատ ըրած հառաջադիմությունը իր հեղինակներուն կամ գրագետներուն կը պարտի...»[27]։

«Հասարակության և ժողովրդի կյանքից են ցանկանում նյութ միայն հարցնում ենք մենք. կա՞ արդյոք հասարակություն և ժողովուրդ մեր մեջը, որ նոր այնպիսի կյանք ունենա, որի մեջ մի բարոյական կենդանություն երևվում լինի։ Մենք կարծում ենք, որ դեռ մեր մեջ կյանք ունեցող հասարակություններ չկան (այն քանի մի հասկացող, ազնիվ ու լուսավորյալ մարդիկը հասարակություն չեն կազմում. նոքա ովազիսներ են անապատի մեջ), այլ

24 «Հյուսիսափայլ», 1861, № 3, էջ 5, 245։
25 Նույն տեղում։
26 Г. В. Плеханов, նշվ. աշխ., էջ 202։
27 «Ծաղիկ», 1861, № 18, էջ 142։

կան միայն սնոտիապաշտ, դյուրահավան ու ըստ մեծի մասին միամիտ բազմություններ, հոտեր...

Ուրեմն եթե կամենանք նկարագրելու մեր հասարակությունների բարոյական կյանքը, պետք է հանդես բերենք այն անձինքներուն, որոնց կամքով նոքա ցանկանում են այս ինչ կամ այն ինչ, խոսենք այն անձինքների վերա, որոնց զգացմունքներին, կրքերին ու շահին մեր հասարակությունները ծառայում են, պետք է առաջ բերենք այն անձինքներուն, որոնց ծուռը և ավելի կեղծ (притворный) *հասկացողությանը և համոզմանցը մերոնք ըստ մեծի մասին ստրուկ են»*[28]։

Նման դեպքերում, լուսավորական ռեալիզմը ավելի շատ ծանրանում է մարդկային բարքերի, նախապաշարումների և սովորույթների վրա՝ ենթարկելով այն լուսավորական քննադատության և երգիծանքի։ Գրական երկը դառնում է տարաբևեռ համոզմունքների բախման գեղարվեստական դրսևորում, իսկ քննադատությունը հարաբերվում է գրականությանը, կյանքն իր իրական և ճշմարտացի դրսևորումներով ցուցադրելու գեղագիտական պահանջների տեսանկյունից։

Մի բան նկատելի է, որ հայ լուսավորիչների քննադատական հայացքները պայմանավորված են հայ կյանքի վերաշինության տեսական և փիլիսոփայական դրույթներով, իսկ նրանց գեղագիտությունը հիմնականում ունի լուսավորական-հրապարակախոսական բնույթ։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ АРМЯНСКОЙ ПРОСВЕТИТЕЛЬСКОЙ ЭСТЕТИКИ

С. Г. АЛЕКСАНЯН

Резюме

Армянская эстетическая мысль 50—60 гг. XIX в. формировалась под влиянием просветительского движения. На основе философских проявлений просветительского мировоззрения возникают те критерии и типологическое своеобразие (дидактизм, требование истинного изображения действительности, публицистический пафос, тенденциозность и т. д.), которые являются результатом одной из познавательных систем, свойственной армянской просветительской литературе и эстетике.

---

28 *«Մեղու Հայաստանիս», 1863, № 17, էջ 168—169։*